ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/3-3

ք.Երևան «14» «03» 2018թ.

<<**ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը**>>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից,իդեմս**վարչության պետ** Ռ. Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել ենհինգօրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է4.717.192(չորս միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար հարյուր իններորդներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդըձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:
8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.11 Պայմանագիրը կազմված է _14___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն	«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	Ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 90001147453 4	Հ/h 1570005065330100
ՀԿՀՀ 02204739	ՀԿՀՀ 01222567
Վարչության պետ՝	Տնօրեն՝ Ա.Սատրյան
Ռ. Հովհաննիսյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«_____»«_____» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
3	33631310/8	դիկլոֆենակ d11ax18. m01ab05. m02aa15. s01bc03/ Դիկլոն մոմիկ 50մգ	Մեդիկալ հորզոն ՍՊԸ Հայաստան	Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում). դեղաձևը. մոմիկներ ուղիղաղիքային. դեղաչափը.50մգ	հատ	89	8900	100	ք.Երևան Արշակունյաց 2	100	3-րդ եռ. - 100 հատ.
8	33631390/1	Նոնիվամիդ. նիկոբոքսիլ M02AX10/ Ֆինալգոնքսուք 20գ	Բերինգեր Ինգելհայմ ֆառմա ԳմբՀ Գերմանիա	Նոնիվամիդ. նիկոբոքսիլ. դեղաձևը.քսուք. դեղաչափը.4մգ/գ+25մգ/գ. 20գ	հատ	1891.63	189163	100	ք.Երևան Արշակունյաց 2	100	1-ին եռ. - 20 հատ 3-րդ եռ. - 40 հատ 4-րդ եռ. -40 հատ. ոչուշ 15.12.2018թ
13	33641413/1	դեքսամեթազոն a01ac02. c05aa09. d07ab19. d07xb05. d10aa03. h02ab02.	Էս.Սի ռոմֆարմ քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով Ռումինիա	Դեքսամեթազոն. դեղաձևը.ակնակաթիլ. դեղաչափը.1մգ/մլ. 10մլ	հատ	568	45440	80	ք.Երևան Արշակունյաց 2	80	1-ին եռ. - 40 հատ 3-րդ եռ. -40 հատ

		r01ad03, s01ba01, s01cb01, s02ba06, s03ba00/ Դեքսամեթազոն ակնակաթիլներ 0.1% 10 մլ								
16	336422104	պրեդնիզոլոն a07ea01, c05aa04, d07aa03, d07xa02, h02ab06, r01ad02, s01ba04, s01cb02, s02ba03, s03ba02/ Պրեդնիզոլոն դ/հ 5մգ	Բելմեդպրեպա-ռատի ՀՈՒՁ Բելառուս	Պրեդնիզոլոն, դեղաձևը՝ դեղահատ, դեղաչափը՝5մգ	դեղահատ	7.29	4374	600	ք.Երևան Արշակունյաց 2	600	4-րդ եռ.-600 դ/հ, ոչ ուշ 15.12.2018թ
23	336511124	ամոքսիցիլին +քլավուլանաթթու j01cr02/ Ամոքսիկլավ դ/հ 625մգ	Լեկ Սլովենիա	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ), դեղաձևը՝թաղանթապատդեղահատ, դեղաչափը՝625մգ (500մգ+125մգ)	դեղահատ	116.69	315063	2700	ք.Երևան Արշակունյաց 2	2700	1-ին եռ. -1500 դ/հ, 4-րդ եռ. 1200 դ/հ, ոչ ուշ 15.12.2018թ
26	336511164	ցեֆազոլին j01db04/ Ցեֆազոլինն/ եևմ/մ 1գ	Բորիսովյան բուժապատրաստուկների գործարան Բելառուս	Ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում), դեղաձևը՝ դեղափոշիներարկմանլուծույթի, դեղաչափը՝ 1000մգ	հատ	143.99	244783	1700	ք.Երևան Արշակունյաց 2	1700	2-րդ եռ. –700 դ/հ, 4-րդ եռ.-1000 դ/հ, ոչ ուշ 15.12.2018թ
27	336511174	ցեֆիքսիմ (ցեֆիքսիմիտրիհիդրատ) j01dd08/ Սուպրաքսդ/ պ 400մգ	Հիկմա ֆարմասյուտիկալս Հորդանան	Ցեֆիքսիմ (ցեֆիքսիմիտրիհիդրատ), դեղաձևը՝ դեղապատիճ, դեղաչափը՝ 400մգ	դեղահատ	1095	43800	40	ք.Երևան Արշակունյաց 2	40	1-ին եռ. – 40 դ/հ
28	336511172	ցեֆիքսիմ (ցեֆիքսիմիտրիհիդրատ) j01dd08/ Պանցեֆդ/կախույթ 100մգ/5մլ 60մլ	Ալկալոիդ Ադ-Սկոպե ԲԼԿԴ.	Ցեֆիքսիմ (ցեֆիքսիմիտրիհիդրատ), դեղաձևը՝ գրանուլներներքինընդունմանդեղակախույթի, դեղաչափը՝ 100մգ/5մլ՝ ապակե շշիկ և չափիչ գդալ	սրվակ	5527	221080	40	ք.Երևան Արշակունյաց 2	40	1-ին եռ.- 40 սրվակ
34	336511274	դոքսիցիկլին	Բելմեդ	Դոքսիցիկլին (դոքսիցիկլինի	դեղահատ	10.24	78848	7700	ք.Երևան	7700	1-ինեռ.- 700

		a01ab22, j01aa02/ Դոքսիցիկլին ի/Հիդրոքլորիդ 0.1գ	պրեպարատի ՀՈՒՉ Բելառուս	հիկլատ).դեղաձևը. դեղապատիճ, դեղաչափը. 100մգ					Արշակունյաց 2		դ/հ. 2-րդեռ. -1000 դ/հ. 3-րդեռ.-2000 դ/հ. 4-րդեռ. 4000 դ/հ. ոչուշ 15.12.2018թ
37	33651134/3	ցիպրոֆլոքսացին j01ma02, s01ae03, s02aa15, s03aa07/ Ցիպրոֆլոքսացին ակնակաթիլներ 0.3% 5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քումպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, Ռումինիա	Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ).դեղաձևը. ակնա-/ականջակաթիլ, դեղաչափը. 3մգ/մլ.5մլ	հատ	378	134190	355	ք.Երևան Արշակունյաց 2	355	1-ինեռ.- 50 հատ. 2-րդեռ. - 60 հատ 3-րդեռ.-80 հատ 4-րդեռ. -165 հատ. ոչուշ 15.12.2018թ
38	33651135/1	քլորամֆենիկոլ d06ax02, d10af03, g01aa05, j01ba01, s01aa01, s02aa01, s03aa08/ Լեվոմիցետին դ/հ 500մգ	Կիևմեդպրեպարատ ՀԲԸ, Ուկրաինա	Քլորամֆենիկոլ. դեղաձևը.դեղահատ, դեղաչափը 500մգ	դեղահատ	41	429680	10480	ք.Երևան Արշակունյաց 2	10480	2-րդեռ.-5000 դ/հ 4-րդեռ.-5480 դ/հ. ոչուշ 15.12.2018թ
40	33651135/3	քլորամֆենիկոլ d06ax02, d10af03, g01aa05, j01ba01, s01aa01, s02aa01, s03aa08/ Սինտոմիցինի նրբամածուկ 10% 25գ	Էսկո-Ֆարմ ՍՊԸ, Հայաստան	Քլորամֆենիկոլ. դեղաձևը.նրբամածուկ, դեղաչափը.100մգ/գ. 25գ	հատ	305	27450	90	ք.Երևան Արշակունյաց 2	90	1-ին եռ. - 10 հատ. 2-րդեռ. - 20 հատ. 3-րդեռ. -30 հատ 4-րդեռ. -30 հատ. ոչուշ 15.12.2018թ
41	33651139/1	մոքսիֆլոքսացին j01ma14, s01ae08/ Մոքսինդ/հ 400մգ	ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Վրաստան	Մոքսիֆլոքսացին (մոքսիֆլոքսացինի հիդրոքլորիդ). դեղաձևը.դեղահատերթաղանթապատ, դեղաչափը. 400մգ	դեղահատ	955.98	955980	1000	ք.Երևան Արշակունյաց 2	1000	1-ին եռ. -300 դ/հ. 2-րդ եռ. -400 դ/հ 4-րդ եռ. -300 դ/հ. ոչ ուշ 15.12.2018թ
43	33651139/3	մոքսիֆլոքսացին j01ma14, s01ae08/ Մոքսիցինակ	Լիկվոր ՓԲԸ, Հայաստան	Մոքսիֆլոքսացին (մոքսիֆլոքսացինի հիդրոքլորիդ). դեղաձևը ակնակաթիլներ, դեղաչափը.5մգ/մլ. 5մլ	հատ	2299	91960	40	ք.Երևան Արշակունյաց 2	40	2-րդ եռ. - 20 հատ. 4-րդ եռ. - 20 հատ. ոչ ուշ

		Նակաթիլներ 0.5% 5մլ									15.12.2018թ
44	33651144/1	նիտրոքսոլին J01XX07/ Նիտրոքսոլին թ/պղ/ի 50մգ	Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԲԸ. Ռուսաստան	Նիտրոքսոլին. դեղաձևը. դեղահատերթաղանթապատ. դեղաչափը. 50մգ	դեղահատ	6,84	27360	4000	ք.Երևան Արշակունյաց 2	4000	1-ին եռ. -500 դ/հ. 2-րդ եռ.- 700 դ/հ. 3-րդ եռ.- 800 դ/հ. 4-րդ եռ.-2000 դ/հ. ոչ ուշ 15.12.2018թ
45	33651145/1	դեքսամեթազոն. նեոմիցին (նեոմիցինիսուլֆատ). պոլիմիքսին B (պոլիմիքսին B-իսուլֆատ) S01CA01/ Մաքսիտրոլ ակնակաթիլներ 5մլ	Ս.Ա. Այկոն-Կուվրոր Ն.Վ. Բելգիա.	Դեքսամեթազոն. նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ). պոլիմիքսին B (պոլիմիքսին B-ի սուլֆատ). դեղաձևը.ակնակաթիլ. դեղաչափը. 1մգ/մլ+3.5ՄՄ/մլ+ 6ՄՄ/մլ. 5մլ	հատ	2199	32985	15	ք.Երևան Արշակունյաց 2	15	1-ին եռ. -5 հատ 3-րդ եռ.- 10 հատ
51	33651170/2	ացիկլովիր d06bb03. j05ab01. s01ad04/ Ացիկլովիրքսուք 5% 5գ	Բելմեդպրեպա-րատի ՀՈՒՉ. Բելոռուս	Ացիկլովիր. դեղաձևը. քսուք. դեղաչափը. 50մգ/գ. 5գ	հատ	304.2	60840	200	ք.Երևան Արշակունյաց 2	200	2-րդ եռ. - 30հատ 4-րդ եռ. -170 հատ. ոչ ուշ 15.12.2018թ
55	33661116/1	լիդոկային c01bb01. c05ad01. d04ab01. n01bb02. r02ad02. s01ha07. s02da02/ Լիդոկային հիդրոքլորիդ ամպ. 2% 2մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան Ֆիրմա ԲԲԸ. Հայաստան	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ).դեղաձևը.լուծույթներարկման. դեղաչափը.20մգ/մլ. 2մլ	սրվակ	24.79	123950	5000	ք.Երևան Արշակունյաց 2	5000	2-րդ եռ.-2000 սրվ 4-րդ եռ.-3000 սրվ. ոչ ուշ 15.12.2018թ
56	33661116/2	լիդոկային c01bb01. c05ad01. d04ab01. n01bb02. r02ad02. s01ha07. s02da02/ Լիդոկայինի	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ. Ուկրաինա	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ).դեղաձևը.լուծույթներարկման. դեղաչափը.100մգ/մլ. 2մլ	սրվակ	84.3	168600	2000	ք.Երևան Արշակունյաց 2	2000	1-ին եռ. - 300 սրվակ 3-րդ եռ. -500 սրվ 4-րդ եռ.-1200 սրվ. ոչ ուշ 15.12.2018թ

		հիդրոքլորիդ ամպ. 10% 2մլ									
62	33661122/1	պարացետամոլ n02be01/ Պարացետամոլ դ/հ 0.5գ	Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԲԸ, Ռուսաստան	Պարացետամոլ, դեղաձևը՝ դեղահատ, դեղաչափը 500մգ	դեղահատ	3,89	279691	71900	ք.Երևան Արշակունյաց 2	71900	1-ին եռ.- 20000 դ/հ 2-րդ եռ.- 25000 դ/հ 4-րդ եռ.- 26900 դ/հ, ոչուշ 15.12.2018թ
66	33661126/1	ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին n02ba51, N02BA71/ Ասկոֆեն դ/հ	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, Ուկրաինա	Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին, դեղաձևը՝ դեղահատ, դեղաչափը 200մգ+200մգ+ 40մգ,	դեղահատ	14	700000	50000	ք.Երևան Արշակունյաց 2	50000	1-ին եռ.- 20000 դ/հ 3-րդ եռ.- 30000 դ/հ, ոչուշ 15.12.2018թ
73	33661314/1	տրիհեքսիֆեն հդիլ n04aa01/ Ցիկլոդոլ դ/հ 2մգ	Գրինդեկս ԲԸ, Լատվիա	Տրիհեքսիֆենիդիլ (տրիհեքսիֆենիդիլի հիդրոքլորիդ), դեղաձևը՝ դեղահատ, դեղաչափը 2մգ	դեղահատ	5.99	24295	4056	ք.Երևան Արշակունյաց 2	4056	3-րդ եռ.-4056 դ/հ
76	33661136/3	դիազեպամ n05ba01/ Սիբազոն (Դիազեպամ) ամպ. 0.5% 2մլ	ԽԴՀ "Զդորովյե նարոդու" ՍՊԸ, Ուկրաինա	Դիազեպամ, դեղաձևը՝ լուծույթ/մն/ներարկման, դեղաչափը.5մգ/մլ, 2մլ	սրվակ	80.5	508760	6320	ք.Երևան Արշակունյաց 2	6320	1-ին եռ. - 1000 սրվ. 2-րդ եռ.-1500 սրվ 3-րդ եռ.-2000 սրվ, 4-րդ եռ.-1820 սրվ, ոչ ուշ 15.12.2018թ
				Ընդամենը			**4.717.192**				

Ծանոթություն՝ա. 2.5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2.5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին
պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

***Բոլոր ապրանքները պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:**

*** Բոլոր ապրանքները մատակարարվելու են մատակարարների միջոցներով, ուժերով և հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում է Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:**

***Բոլոր հղումների դեպքում հասկանալ «կամ համարժեք» արտահայտությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան:**

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց 63

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02003709
Վարչության պետ
Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/Կ.Տ

«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/h 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"

Հավելված N 2
«14» «03» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿՎ ԳՀԱՊՁԲ-18/3-3ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**				
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
3,8,13,16, 23,26,27, 28,34,37, 38,40,41, 43,44,45, 51,55,56, 62,66,73, 76	ԴԵՂՈՐԱՅՔ	**628.802**	**1.729.322**	**2.987.397**	**4.717.192**	**4.717.192**

Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: *

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/h 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«14» «03» 2018թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-3ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
Պատվիրատուն՝իդեմս _____ և
Պայմանագրիկողմը՝իդեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալմատակարարումներիկատարմանվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«14»«03» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/13-3ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն